ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-2015 ԹԹ.)

ՂՈՒԼՅԱՆ Հ. Գ.

Հայաստանը 1991 թվականին անկախություն ստանալուց հետո հնարավորություն ունեցավ վարելու ինքնուրույն արտաքին քաղաքականություն. սկսվեց տարբեր երկրների հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման ընթացքը: Առաջնային նշանակություն ունեցան Ֆրանսիայի հետ երկկողմանի կապերի հաստատումը և կարգավորումը, քանզի Ֆրանսիայում առկա է ստվարաթիվ հայկական Սփյուռք: Նշենք նաև, որ միջազգային բազմաթիվ հարցերի շուրջ Ֆրանսիայի և Հայաստանի տեսակետները համընկնում են: Երկու երկրների մերձեցումն օրինաչափ է, քանի որ Հայաստանը և Ֆրանսիան հաճախ ունեցել են համերաշխ կապեր, հարգել են միմյանց շահերը: Հիշարժան է Ֆրանսիայի օգնությունը 1988 թվականի ավերիչ երկրաշարժի ժամանակ: Ֆրանսիայի քաղաքները ցուցաբերեցին մարդասիրական օգնություն Հայաստանին և դրանով իսկ առաջիններն էին, որ բարեկամական վերաբերմունք դրսևորեցին Հայաստանի ազգաբնակչության հանդեպ:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայի քաղաքականությունը ԱՊՀ երկրների հանդեպ դուրս չի գալիս Եվրամիության վարած միասնական քաղաքականության շրջանակներից: Ինչպես արևմտյան երկրների, այնպես էլ Ֆրանսիայի հետ հարաբերություններում Հայաստանն ընկալվում է որպես քրիստոնեական արժեքներով և մտավորականության որակական ներուժով երկիր: Բացի այդ, հեռանկարում Հայաստանը կարող է դառնալ տարանցիկ ճանապարհ, մի կողմից՝ Սև և Կասպից ծովերի միջև, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև:

Հայաստանի Հանրապետությունն ունի նաև ռազմավարական նշանակություն հարավկովկասյան տարածաշրջանում, և Ֆրանսիան, ձգտելով ապահովել իր ներկայությունն այստեղ, իրականացնում է երկկողմանի հարաբերությունների հաստատում տարածաշրջանի երկրների հետ:

1992 թ. հունվարի 3-ին Ֆրանսիան ճանաչեց ՀՀ-ի անկախությունը, իսկ 1992 թ. փետրվարի 24-ին Ֆրանսիայի հումանիտար օգնության հարցերով պետքարտուղար Բ. Կուշների՝ Հայաստան կատարած այցի ժամանակ երկու երկրների միջև

ստորագրվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ արձանագրություն[1]:

Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև երկկողմանի համագործակցությունն ընդգրկում է հետևյալ ոլորտները՝

- քաղաքական,
- տնտեսական,
- գիտության, կրթության և մշակույթի:

Նկատելի է, որ Ֆրանսիան մեծ նշանակություն է տալիս Հայաստանի հետ կապերի զարգացմանը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1993 թ. ստորագրվեց համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության բարեկամության ու համագործակցության մասին[2]:

1992 թ. մարտի 14-ին Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանս դե Հարտինգիրը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հանձնեց իր երկրի հավատարմագիրը, իսկ 1992 թ. մարտի 20-ից Հայաստանում սկսեց գործել Ֆրանսիայի դեսպանատունը:

Պաշտոնական կապերի հաստատումից հետո արձանագրվեցին երկու երկրների միջև տարբեր մակարդակների փոխգործակցության շփումներ ու հարաբերություններ (1992 թ. ապրիլին պաշտոնական այցով Ֆրանսիա մեկնեց ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանը, 1993 թ. մարտի 13-ին ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Ֆրանսիա, Ֆրանսիայի Ազգային ժողովի մի քանի պատգամավորներ, ներառյալ՝ Ռիշար Կազանովը, Ֆրանսուա Ռոշբուլանը և Պատրիկ Դևեջյանը, 1990 թ. վերջին հանդիպում ունեցան ՀՀ Գերագույն խորհրդում, 1996 թ. մարտի 26-ին պաշտոնական այցով Փարիզում գտնվող ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանը հանդիպեց վարչապետ Ալեն Ժյուպեին, և տեղի ունեցան մի շարք այլ հանդիպումներ):

ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը և Ֆրանսիայի Եվրոպական հարցերով նախարարության ներկայացուցիչ Միշել Բարնեն ստորագրեցին հայտարարություն՝ «Երկու երկրների միջև եկամտի և գույքի համար կրկնակի հարկումից խուսափելու մասին»: Ստորագրվեց նաև հուշագիր էներգետիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ՝ բացառելով քաղաքական չարաշահումները

---

[1] Protocole Sur L'etablissement Des Relations Diplomatiques Entre la Republique Francaise et la Republique D'Armenie (HTTP:// WWW.DOC.DIPLOMATIE.GOUV.FR /BASIS/PACTE/WEBEXT/BILAT/DDD/19920032.PDF).

[2] Ֆրանսիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության համաձայնության մասին պայմանագիր, http://www.armeniaforeign-ministry.am/doc/conventions/3-05-francebigsogI-12-03-93-a.pdf.

ատոմային էներգիայի զարգացման հարցերում: Դեռևս այդ ժամանակ քննարկվող խնդիրների շրջանակում մեծ տեղ էր հատկացվում Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցին:

Երկկողմանի հարաբերություններն ավելի ակտիվացան 1996 թ. հուլիսի 13-ից. նորանշանակ դեսպան Միշել Լեգրանը Երևանում հավատարմագիր հանձնեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Զգտելով նպաստել, որ ԼՂՀ-ի ձայնը լսելի լինի հակամարտության կողմերին, 1996 թ. դեկտեմբերին Ֆրանսիան կազմակերպեց ԼՂՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանի այցը Փարիզ[3], որի ընթացքում վերջինս հանդիպեց ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչների հետ:

Այդ շրջանում արդյունավետորեն զարգանում էր նաև ֆրանսիական իշխանությունների վերահիմաստավորման գործընթացը Հարավային Կովկասի երեք հանրապետությունների հետ գործող տնտեսական ու ռազմավարական կապերի շուրջ:

Ֆրանսիան պաշտոնապես տեղի տվեց նաև իր ձգտումներին դառնալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, որը հետմտում էր առավել ակտիվ ընդգրկվել ԵԱՀԿ խաղաղարար գործընթացում, ինչպես նաև ունենալ տնտեսական ու ռազմավարական երաշխիքներ Հարավային Կովկասում:

Հայաստանի հավասարակշռված դիրքորոշումը, ընդհակառակը, նպաստեց վստահության մթնոլորտի ստեղծմանը: Ֆրանսիայում հավատարմագրված ՀՀ ներկայացուցիչ Կ. Տեր-Ստեփանյանն այդ առիթով նշեց. «Նախապատվությունը, որը տալիս է Հայաստանը Ֆրանսիային, վառ ապացույց է նրան, որ մենք արժևորում ենք այդ երկրի հարաբերությունները»[4]: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ, ֆրանսիացիների կարծիքով, ԱՄՆ-ի փորձերը՝ խցկվել այդ տարածաշրջան, դրական արձագանք ստացան երկու հարևան հանրապետություններում: ԱՄՆ-ն խաղարկեց վերջիններիս հետ և օգտագործեց դրանց քաղաքական, տնտեսական և նույնիսկ պատմական գործոնները (Վրաստան-Գերմանիա, Ադրբեջան-Մեծ Բրիտանիա), որպեսզի նրանց տրամադրի դեպի իր կողմը:

Երկկողմանի կապերի զարգացման հաջողված փորձերի շարքին կարելի է դասել նաև այն, որ 1998 թ. մայիսին Երևանը դարձավ ֆրանսալեզու քաղաքների Միջազգային ասոցիացիայի անդամ (AIMF): AIMF-ն զբաղվում է անդամ-քաղաքների քաղաքական հարցերով՝ նպատակաուղղված դրանցում բարելավելու կյանքի պայմանները[5]:

---

[3] *Информация об отношениях с Францией. Официальный сайт МИД РА: http://www.mfa.am.*

[4] *Նույն տեղում, g. 3, q. 195, թ. 141:*

[5] *Le monde de la Francophonie: http://www.francophonie.org/-Etats-et-gouver-nments-html.*

Հարկ է փաստել, որ հայ-ֆրանսիական հարաբերությունները կառուցվում էին ինչպես երկու երկրների քաղաքական վերնախավերի ընդհանուր տրամադրության գործոնի վրա, այնպես էլ երկու ժողովուրդների փոխշահավետ կապերի (նաև Սփյուռքի գործոնը), ազգային շահերի ընդհանրության և պատմական ավանդույթների հիման վրա: Պատահական չէ, որ երկու երկրներում էլ իշխանության փոփոխությունները չհանգեցրին հարաբերություններում էական տեղաշարժերի, քանզի պահպանվեց և զարգացավ բարի-դրացիական գործակցությունը:

1998 թ. կայացած քաղաքական փոփոխություններն էականորեն չազդեցին ՀՀ արտաքին քաղաքականության գործընթացի վրա: Կ. Տեր-Ավետիսյանի խոսքով՝ «ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահներ Ֆրանսուա Միտերանի ու Ժակ Շիրակի միջև ավանդաբար կուտակվել էին լավ հարաբերություն-ներ, որոնք պայմանավորված էին առկա համաձայնություններով: Լ. Տեր-Պետրոսյանը, ֆրանսիացիների կարծիքով՝ զսպվածության խորհրդանիշ էր համարվում Լեռնային Ղարաբաղի բանակցությունների հարցերում, ինչը գնահատվում էր ֆրանսիացիների կողմից»[6]: Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած հակամարտության փուլերով կարգավորման տարբերակի վերաբերյալ[7] Ֆրանսիայի ԱԳՆ շատ պաշտոնյաների մեջ զարմանք հարուցեց. ըստ նրանց՝ նման դիրքորոշմամբ Լ. Տեր-Պետրոսյանը մեծ ռիսկ էր վերցնում իր վրա:

Լ. Տեր-Պետրոսյանից հետո Ռ. Քոչարյանի ընտրվելը ՀՀ նախագահի պաշտոնում Ֆրանսիայում ընկալվեց որպես Հայաստանը փակուղուց դուրս բերելու հնարավորություն, քանի որ Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկած տարբերակն անհնարին էր կիրառել Ղարաբաղյան հակամարտության լուծման գործում: Ֆրանսիական իշխանությունները, ծանոթ լինելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ռ. Քոչարյանի առավել արմատական տեսակետին, հանձին նրա տեսնում էին այն ղեկավարին, որն ի վիճակի էր իրականացնելու խաղաղ համաձայնությունը: Ֆրանսիացիները, հաշվի առնելով իրենց պատմական փորձը, մասնավորապես Շառլ դը Գոլի մոտեցումն Ալժիրյան հարցին, կարծում էին, որ Ռ. Քոչարյանը կընդունի առավել ճկուն ուղղություն: Ֆրանսիայի ղեկավարությունը գնահատեց նաև նրա կառուցողականությունը, որը հնարավորություն տվեց Ռ. Քոչարյանի վարչապետ ժամանակ՝ 1997 թվականին, երկկողմանի տնտեսական հարաբերություններին հաղորդելու նոր զարգացում:

---

[6] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 3, գ. 195, թ. 142:

[7] Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղիները. Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005 թ. ՀՀ ԱԺ, Ե., 2006, էջ 470:

Ղարաբաղյան հակամարտության և Հայոց ցեղասպանության հարցերի վերաբերյալ նոր իշխանությունների տեսակետները վկայում են այն մասին, որ իշխանությունը Հայաստանում իրականում փոխվել է, և արտաքին քաղաքականությունում երևան են գալիս նոր դրսևորումներ, որոնք ակտիվությամբ տարբերվում են նախկին իշխանությունների քաղաքականությունից:

Ֆրանսիան, լինելով Թուրքիայի մատակարար մի շարք ապրանքների ու ծառայությունների գծով, ցեղասպանության հարցը դիտարկեց որպես Թուրքիայի շահերի դեմ հնարավոր տնտեսական վտանգ: Այդուհանդերձ, գործադիր իշխանությունը չկարողացավ դիմակայել խորհրդարանական նախաձեռնությանը՝ զգուշանալով հայկական ծագումով ֆրանսիական ընտրողների և հասարակական կարծիքի դժգոհություններից, որոնք հիմնականում մեծ նշանակություն են տալիս մարդու իրավունքներին:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի իշխանությունները սկսեցին նախաձեռնել համապատասխան քայլեր: 1998 թ. նոյեմբերին Ֆրանսիա ժամանեց նախագահի խորհրդական, ՀՅԴ նախագահ Վ. Հովհաննիսյանը, որի նպատակն էր հաստատել անմիջական կապեր Ֆրանսիայի տարածքային իշխանությունների հետ և ամփոփել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: 1999 թ. մարտի 16-ին Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Է. Նալբանդյանը, որը այդ պաշտոնում մնաց մինչև 2008 թ.: Այդ թվականից կարևոր ավանդույթ դարձավ նաև դեպի Ֆրանսիա ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների այցերը: Ֆրանսիա այցելեցին ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանը, արտգործնախարար Ն. Մելքումյանը, որոնք հան-դիպեցին Ֆրանսիայի քաղաքական և պետական գործիչների ու Ստյուռքի ներկայացուցիչների հետ:

Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր՝ Ֆրանսիան փորձում էր ակտիվացնել բանակցությունների գործընթացը: Ֆրանսիայի Սենատի նախագահ Կ. Պոնսլեի հրավերով Փարիզում (2000 թ. հոկտեմբերի 14-15-ին) հանդիպեցին Ադրբեջանի Միլի Մեջլիսի նախագահ Ալեքպերովը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Ջ. Ժվանիան և ՀՀ ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանը: Արդյունքն ընդհանուր հայտարարագիրն էր, որով կողմերը, ելնելով ընդհանուր շահերից, որոշեցին խորհրդարանների միջև ստեղծել տարբեր օրենսդրական ենթաոլորտներում խորհրդատվության և համագործակցության կառուցակարգ: Որոշվեց Պոնսլեի հովանավորության ներքո կրկին հանդիպել՝ քննարկելու տարածաշրջանում անվտանգության և կայունության հարցերը՝ նպաստելու համար մշակութային, տնտեսական և սոցիալական հարաբերությունների զարգացմանը Հարավային Կովկասի և Եվրոպայի միջև: 2001 թ. հոկտեմբերի 23-ին Պոնսլեի հովանավորության

ներքո կայացավ երրորդ եռակողմ հանդիպումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի օրենսդրական պալատների նախագահների միջև, որի ընթացքում ստորագրվեց հռչակագիր[8]:

2000 թ. հուլիսի 30-ին աշխատանքային այցով, իսկ 2001 թ. փետրվարի 12-16-ին Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի հրավերով պետական այցով Ֆրանսիա ժամանեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Պետական այցի ընթացքում նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպեց նախագահ Ժ. Շիրակին, վարչապետ Լ. Ժոսպենին, Սենատի նախագահ Կ. Պոնսլեին, ԱԺ նախագահ Ռ. Ֆորնիին, Փարիզի քաղաքապետ Ժան Տիբերիին: Երկու երկրների նախագահներն անցկացրին համատեղ մամլո ասուլիս:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ այդ տարիների համար Ֆրանսիայի ղեկավարությունը հայ-ֆրանսիական գործակցությունը չէր սահմանափակվում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում գործունեությամբ: Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի անձնական նախաձեռնությամբ և մասնակցությամբ Փարիզում կազմակերպվեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում: Ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները պատմության մեջ մտան «Փարիզյան սկզբունքներ» անվանումով:

Ֆրանսիայում 2002 թ. ապրիլի 21-ին մայիսի 5-ին անցկացվեցին նախագահական ընտրություններ, որում հաղթանակ տարավ գործող նախագահ Ժ. Շիրակը[9]: Նա հավաքեց 82% ձայն, որն ամենաբարձրն է Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության պատմության մեջ:

2002 թ. հուլիսի 2-ին նախագահ Ժ. Շիրակի հրամանագրով Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղարի պաշտոնում նշանակվեց Ռենո Մյուզելեին[10]: 2002 թ. հոկտեմբերի 3-5-ը Հայաստանում էր Ֆրանսիայի պատվիրակությունը՝ Ռ. Մյուզելեի գլխավորությամբ[11]: Ֆրանսիայի ԱԳՆ-ի և պետքարտուղարի առջև դրված էր բարդ խնդիր: Այն է՝ ապահովել արտասահմանում ֆրանսիական վարչակազմի միասնական մասնակցություն: Պաշտոնյան հանդիպեց ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԳՆ նախարարի, առողջապահության, կրթության և գիտության նախարարների, Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Պատվիրակությունն այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցեց անմեղ զոհերի հիշատակին[12]: Հոկտեմբերի 4-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղարը

---

[8] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 3, գ. 195, թ. 31:

[9] Նույն տեղում, ց. 5, գ. 22, թ. 47:

[10] Նույն տեղում, թ. 51:

[11] Նույն տեղում, թ. 52:

[12] Նույն տեղում, թ. 22:

մասնակցեց Հայաստանում Ֆրանսիական համալսարանի երկրորդ մասնաշենքի բացման արարողությանը, որին մասնակցեցին նաև ԵՄ անդամ երկրների դեսպանները և Եվրոպական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հայ-ֆրանսիական միջպետական կապերի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ստացավ 2006 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը նախագահ Ժ. Շիրակի պետական այցը Հայաստան: Ռ. Քոչարյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ ինչպես միջազգային նշանակության հիմնախնդիրների, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հետ կապված: Ֆրանսիայի նախագահի այցն ուներ բացարձակ նշանակություն՝ ինչպես երկկողմանի հարաբերությունների հետագա զարգացման տեսանկյունից, այնպես էլ Եվրամիության ու Հայաստանի միջև համագործակցության խորացման պլանի և միջազգային թատերաբեմում Հայաստանի հեղինակության բարձրացման համար: Ժ. Շիրակը ԵՄ երկրների միակ ղեկավարն էր, որը հրապարակայնորեն հայտարարեց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության՝ որպես նրա ԵՄ մտնելու պայմանի մասին[13]: Այդ տեսակետը նորից հնչեցվեց Երևանում ՀՀ նախագահի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ:

Քաղաքական երկխոսության խորացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցան հաջորդող տարիներին պաշտոնական տարբեր մակարդակներում տեղի ունեցած հանդիպումներն ու փոխայցելությունները, մասնավորապես 2008 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցը Ֆրանսիա, 2009 թ. մայիսին Պրահայում կայացած ԵՄ «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի շրջանակներում ՀՀ նախագահի հանդիպումը Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի հետ, 2010 թ. Երևանում տեղի ունեցավ հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության II համաժողովը, իսկ 2011 թ. Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան պատմական էր թե՛ իր նշանակությամբ, թե՛ արդյունքներով:

2012 թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Չնայած օրենքի ուժի մեջ մտնելուն խոչընդոտ հանդիսացավ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը՝ Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Հոլանդը տարբեր առիթներով բազմիցս վերահաստատեց նպատակադրվածությունը հասնելու Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը: Հատուկ կարևորություն ունի նաև այն հանգամանքը, որ 2015 թ. ապրիլի 24-ին

---

[13] *Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի պետական այցը Հայաստան, 29.09-01.10.2006թ., // http://www.gov.am/am/news/item/2837/:*

Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը: Բացի այդ, 2015 թ. ընթացքում Հայաստանը եղել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամենաակտիվ անդամներից՝ ներգրավված լինելով կազմակերպության տարբեր կառույցների աշխատանքներում: Այդ տարվա մարտի 3-ից ապրիլի 30-ը Հայաստանում կայացած Ֆրանկոֆոնիայի երկամյակի շրջանակներում Երևանում և Հայաստանի մի շարք մարզերում կազմակերպվել է շուրջ 550 միջոցառում[14]:

Հայ-ֆրանսիական գործակցության շրջանակներում ձևավորված սկզբնական փոխըմբռնումը և հետագա տարիներին կայացած շփումները Հայաստանի և Ֆրանսիայի բարձրագույն իշխանությունների միջև կրում էին սերտ, փոխշահավետ բնույթ: Համագործակցության շրջանակներում հատուկ տեղ են զբաղեցնում նաև խորհրդարանականների, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապերը: Հայաստանը, ի դեմս Ֆրանսիայի, ձեռք բերեց հուսալի գործընկեր, որը նպաստեց զարգացնելու հարաբերությունները եվրոպական կառույցների հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Ֆրանսիայի օգտակար դերակատարությանը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության շրջանակներում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Հարկ է նաև նշել, որ ապակենտրոնացված մակարդակով փոխշահավետ համագործակցությունը շարունակում է ավելի ընդլայնվել և ընդգրկում է նորանոր ոլորտներ:

Որպես ամփոփում՝ հարկ է փաստել, որ հայ-ֆրանսիական հարաբերությունները կառուցվել են նախ և առաջ ազգային շահերի փոխադարձ հարգանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև ժամանակի պահանջները: Երկկողմանի ակտիվ համագործակցությունը բարձր մակարդակի հասցրեց միջխորհրդարանական, միջկառավարական, միջգերատեսչական գործակցությունը՝ դրանց միջոցով կյանքի կոչելով տարատեսակ ծրագրերի ու պլանների իրականացման, խնդիրների արդյունավետ լուծման հնարավորություններ: Նշանակալիորեն աշխուժացավ համագործակցությունը իշխանության տարբեր թևերի միջև: Կողմերը հայ-ֆրանսիական համագործակցության համատեքստում մշտապես քննարկում են միջազգային իրավիճակի արդի հարցեր, մասնավորապես կարևոր քաղաքական բազմաթիվ հարցեր՝ պայմանավորելով նաև Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշը:

---

[14] Այս և բազմաթիվ այլ պաշտոնական փոխայցելությունների մասին լրացուցիչ տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններում և Ֆրանսիայի հետ երկկողմ հարաբերությունների մասին տեղեկատվությունում(http://mfa.am/hy/annualreport/ և http://mfa.am/hy/country-by-coun-try/fr/):

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНО-ФРАНЦУЗСКИХ ОТНОШЕНИЙ (1991-2015 ГГ.)

ГУЛЯН Г. Г.

Резюме

В результате весьма успешных переговоров и достигнутых за столько лет договоренностей, а также политического диалога между двумя странами установились теплые дружественные и доверительные отношения. Официальные визиты способствовали обсуждению многих политических вопросов. Армяно-французский политический диалог ведется на довольно высоком уровне, содействуя прогрессу переговорного процесса по урегулированию Карабахского конфликта в формате Минской группы.

THE ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF ARMENIAN- FRENCH RELATIONS (1991-2015)

H. GHOULYAN

Abstract

Studying the history and content of the Armenian-French relations, it can be concluded about the importance of the official visits and negotiations on a regular basis. As a result of quite successful negotiations and reached agreements for so many years and also the political dialogue, the two countries have established a good friendship and relations based on mutual trust. Visits contributed to the discussion of political issues. The Armenian-French political dialogue is at a fairly high level, contributing to the progress of the negotiation process of the settlement of the Karabakh Conflict in Minsk Group format.